ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.03.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2022/19

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

Բողոք բերող՝ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ

Համանման բողոք բերող՝ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ներկայացուցիչներ՝ Դ. Շատվերյանի, Ա. Մնացականյանի,

«Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝ Մ. Խաչատուրյանի,

«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ե. Գևորգյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/12» ծածկագրով բաց մրցույթ, ՀՀ Լոռու մարզի Տաշիրի բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 08.02.2022թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ բողոք) և կից փաստաթղթերը, «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն 1) կողմից 17.02.2022թ.-ին

ներկայացված համանման բողոքը (այսուհետ նաև՝ համանման բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/12» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել հանձնաժողովի 04.02.2022թ.-ի թիվ 2-4 արձանագրության 1.2 կետով կայացրած որոշումը՝ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ:

Ընկերությունը 07.03.2022թ.-ին ներկայացված բողոքի լրացմամբ խնդրել է նաև դադարեցնել «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/12» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին 07.02.2022թ.-ին հրապարակված հայտարարությունը:

Ընկերություն 1-ը, ներկայացրած համանման բողոքով, Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/12» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 04.02.2022թ.-ի թիվ 2-4 արձանագրության 1.2 կետով կայացրած որոշումը՝ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ:

Բողոքներ քննող անձին «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքը մակագրվել է 08.02.2022թ.-ին:

10.02.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/19 համարի ծածկագիրը:

Բողոքներ քննող անձին «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված համանման բողոքը մակագրվել է 17.02.2022թ.-ին:

18.02.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված համանման բողոքը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/19 համարի ծածկագիրը:

18.02.2022թ.-ին, 25.02.2022թ.-ին և 10.03.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 25.02.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 10.03.2022թ.-ին:

2. <u>«Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ն 08.02.2022թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Սույն բողոքի լուծման համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից 2021 թվականի դեկտեմբերի 07-ին ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/12 ծածկագրի ներքո հայտարարվել է բաց մրցույթ ՀՀ Լոռու մարզի Տաշիրի բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով (այսուհետ՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ն:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.01.2022 թվականին կազմված թիվ 2-2 արձանագրության 1.2-րդ կետով արձանագրվել են անհամապատասխանություններ:

4.Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.02.2022 թվականին կազմված 2-4 արձանագրության (այսուհետ՝ Արձանագրություն) 1.1-րդ կետի համաձայն՝ առանձին տողերում ներկայացված մոդելները չեն համապատասխանում հրավերի պահանջներին:

Նույն արձանագրության 1.3-րդ կետի համաձայն՝ «Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ Կարգի 42-րդ կետի պահանջների հիման վրա «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի (...) հայտը մերժել»:

Գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի Արձանագրությունը «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասով անհիմն է և ենթակա է վերացման՝ հետևյալ պատճառաբանությամբ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):»

Նույն օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04/05/2017 թվականի թիվ 526-Ն որոշման 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն որոշման 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, (...):

Վերոբերյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ ներկայացված հայտում թերությունների առկայության դեպքում ընթացակարգի գնահատող հանձնաժողովը դրանց վերաբերյալ կազմում է արձանագրություն՝ ծանուցելով մասնակցին՝ վերջինիս ընձեռելով հնարավորություն սահմանված ժամկետում դրանք շտկելու:

Սույն պարագայում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.01.2022 թվականին կազմված թիվ 2-2 արձանագրության 1.2-րդ կետով արձանագրվել են անհամապատասխանություններ, ինչի հիման վրա «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ին տրամադրվել է ժամկետ շտկումները կատարելու համար, ինչը սահմանված ժամկետում կատարվել է, սակայն գնահատող հանձնաժողովի համար շտկումները համարվել են ոչ ամբողջությամբ կատարված:

Հարկ է արձանագրել, որ բողոքաբերի կողմից կատարվել են բոլոր անհրաժեշտ շտկումները, մասնավորապես, հավելվածի շտկված տարբերակում ներկայացվել են համապատասխան սարքավորումների մոդելները: Միաժամանակ, ներկայացված մոդելները իրենց տեխնիկական բնութագրերով ունեն առավել լավ նկարագիր, քան այն, ինչ

սահմանված էր հրավերով, որպիսի հանգամանքը չի կարող դիտվել որպես հրավերի պահանջներին չհամապատասխանող:

Վերոգրյալի հիման վրա՝ եզրահանգում ենք, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04/02/2022 թվականի թիվ 2-4 արձանագրությունը «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասով անհիմն է, այն ընդունվել է օրենքի խախտմամբ և ենթակա է անվավեր ճանաչման:»:

Ելնելով վերոգրյալից՝ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/12» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել հանձնաժողովի 04.02.2022թ.-ի թիվ 2-4 արձանագրության 1.2 կետով կայացրած որոշումը՝ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ:

«Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ն 07.03.2022թ.-ին ներկայացրած բողոքի լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է գտնվում «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի բողոքի հիման վրա հարուցված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/19 գործը:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/12 ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.02.2022 թվականին կազմված 2-4 արձանագրության (այսուհետ՝ Արձանագրություն) 1.1-րդ կետով արձանագրվել են «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից կատարված շտկումների անհամապատասխանություններ, մասնավորեապես՝

ա) կետով գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից 28, 30, 35, 43, 55-57, 60, 70, 73, 82, 93-94 և 98 տողերում ներկայացված մոդելները տեխնիկական բնութագրերով չեն համապատասխանում հրավերի պահանջներին, սակայն որևէ բացատրություն, հիմնավորում չի նշել, թե ո՞ր մասով չի համապատասխանում հրավերի պահանջներին, ի՞նչ համեմատության արդյունքում է գնահատող հանձնաժողովը հանգել նման եզրակացության, եթե որևէ մանրամասնություններ չի նշել, թե իր կողմից ինչն է համեմատվել և ինչ անհամապատասխանություն է հայտնաբերել:

բ) կետով գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից 101 և 103 տողերով ներկայացված մոդելները տեխնիկական բնութագրերով չեն համապատասխանում հրավերի պահանջներին և փակագծերում նշել է շատ հզոր է մեկնաբանություն: Փաստում, ենք, որ մեր կողմից նշված տողերով ներկայացված ծխահեռացման կենտրոնախույզ օդամղիչը անգամ եթե որոշ չափով հզոր է հրավերով պահանջվածից, ապա դրա աշխատանքը որևէ կերպ չի խաթարում ընդհանուր սարքավորում-համակարգերի աշխատանքը, քանի որ նշված տողերով ներկայացված

սարքավորումը աշխատում է առանձին առանց որևէ ընդհանուր համակարգի հետ համատեղ և դրա հզոր լինելը լիովին համապատասխանում է հրավերի պահանջներին: Ավելին՝ գնահատող հանձնաժողովը շատ հզոր է գնահատականը տալուց նույնիսկ չի արձանագրել, թե ինչքան հզոր է, անհասկանալի է չափման և գնահատման միավորը:

դ) կետով գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից 22-25, 40, 69 տողերով ներկայացված են սխալ արտադրողներ: Տվյալ տողով առաջարկվող սարքավորումները մեր կողմից որոնվել են ինտերնետ համակարգում և VENTEL ապրանքանիշով պաշտոնական կայքում առկա է եղել համապատասխան սարքավորումը (https://www.lufter.ru/product/ventiljator-vr-80-75-25-radialnyj-nizkogo-davlenija/#:~:text=%D0%92%D0%B5%D0%BD%D1%82%D0%B8%D0%BB%D1%8F%D1%82%D0%BE%D1%80%D1%8B%20%D0%92%D0%A0%2080%2D75%20%E2%84%96,%D0%BB%D0%B5%D0%B2%D0%BE%D0%BC%20%D0%BD%D0%B0%D0%BF%D1%80%D0%B0%D0%B2%D0%BB%D0%B5%D0%BD%D0%B8%D0%B8%20%D0%B2%D1%80%D0%B0%D1%89%D0%B5%D0%BD%D0%B8%D1%8F%20%D1%80%D0%B0%D0%B1%D0%BE%D1%87%D0%B5%D0%B3%D0%BE%20%D0%BA%D0%BE%D0%BB%D0%B5%D1%81%D0%B0.), ինչն էլ մեր կողմից առաջարկվել է, ավելին՝ սույն բողոքի քննության համար հրավիրված նիստում պատվիրատուի ներկայացուցիչը արձանագրեց, որ նշված տողերով ներկայացված սարքավորումները իրենց տեղնիկական բնութագրերով համապատասխանում են հրավերի պահանջներին, միայն թե արտադրողի անունն է սխալ, որը ըստ մեզ չի կարող համարվել հրավերի պահանջների անհամապատասխանություն:

ե) կետով գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից 126 տողով ներկայացված մոդելի համապատասխանությունը հրավերի պահանջներին ստուգել չի հաջողվել՝ համացանցում տեղեկատվության բացակայությամբ պայմանավորված (նման արտադրող չի գտնվել): Նշված կետով մեր կողմից ներկայացվել է «Schirtec S-AM շանթարգիչ սարք», արտադրող «EN-SISTEM», մոդելը «00107» , որը առկա է EN-SISTEM արտադրողի պաշտոնական կայքում https://en-sistem.ru/schirtec-s-am :

Վերը նշվածի մասով բողոքի քննության համար հրավիրված նիստում պատվիրատուի ներկայացուցիչը ընդունեց, որ նման սարքավորում առկա է և այդ մասով արձանագրեց գնահատող հանձնաժողովի կողմից սխալ արձանագրում:

Ամփոփելով վերոգրյալը ևս մեկ անգամ եզրահանգում ենք, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.02.2022 թվականին կազմված 2-4 արձանագրության 1.2-րդ կետը «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասով անհիմն է և ենթակա է դադարեցման, որի հիմքով էլ վերացման է ենթական նաև «Տաշիրի բժշկական

կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/12 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին» 07.02.2022 թվականին հրապարակված հայտարարությունը:»:

Ելնելով վերոգրյալից՝ բողոքի լրացմամբ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է նաև դադարեցնել «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/12» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին 07.02.2022թ.-ին հրապարակված հայտարարությունը:

3. <u>«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն 17.02.2022թ.-ին ներկայացրած համանման բողոքով հայտնել է հետևյալը.

««Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք,այն է

1) Պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում համարժեք հատուցմամբ.

2) Գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կամակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հողվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար ՀՀ Լոռու մարզի Տաշիրի բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/12» ծածկագրով բաց մրցույթ /այսուհետ նաև Ընթացակարգ/, որին մասնակցել է «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն:

Հայտերի բացումից հետո /www.armeps.am/ հանձնաժողովի կողմից 31.01.2022թ.-ին կազմվել է արձանագրություն N 2-2, որի համաձայն 1 աշխատանքային օրվա ընթացքում մասնակիցներից պահանջվել է շտկում, որն էլ պահանաջված ժամկետում ներկայացվել է մեր կողմից:

«Գնորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ին արձանագրվել է շտկել հավելված 1.2 /սարքավորումներ/, մասնավորապես տող 1, 18-103, 109 և 126 որն էլ պահանջված կարգով և ժամկետում արվել է:

Այնուհետև 04.02.2022թ.-ին կազմվել է արձանագրություն N 2-4, ըստ որի բոլոր մասնակիցների շտկման մեջ ի հայտ են եկել թերություններ, մասնավորապես «Գնորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից հավելված 1.2-ի մասով չշտկված են համարվել ներքոնշյալ հիմնավորումներով

ա) 52-54,68-69,71,78-79,81,95-103 տողերում ներկայացված մոդելը և արտադրողը իրար չեն համապատասխանում (ներկայացված արտադրողը նման մոդելային շարք չունի),

բ) 27,31,42,45,47,63-64,76,88 տողերում ներկայացված մոդելները տեխնիկական բնութագրերով չեն համապատասխանում հրավերի պահանջերին:

Արձանագրության 1.3-րդ կետի համաձայն՝ «Գնահատող հանձնաժողովը» որոշեց Կարգի 42-րդ կետի պահանջների հիման Վրա «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Գնահատող հանձնաժողովի արձանագրությունը «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասով անհիմն է և ենթակա է վերացման, բանի որ գնահատող հանձնաժողովի 31.02.2022թ.-ին կազմված թիվ 2-2 արձանագրության 1.2 կետով արձանագրված անհամապատասխանությունները «Գևորգյան և Ներսիսան» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվել են, սակայն հանձնաժողովի համար շտկումները համարվել են թերի:

Հարկ է նշել, որ մեր կողմից կատարվել են բոլոր անհարժեշտ շտկումները, մասնավորապես արձանագրության մեջ մեզ վերաբերվող «ա» ենթակետում նշված այն պնդումը, որ տողերում ներկայացված մոդելը և արտադրողը իրար չեն համապատասխանում (ներկայացված արտադրողը նման մոդելային շարք չունի), իրականությանը չի համապատասխանում, իսկ «բ» ենթակետում նշված պնդումը, այն է՝ տողերում ներկայացված

մոդելները տեխնիկական բնութագրերով չեն համապատասխանում հրավերի պահանջներին, ևս չի համապատասխանում իրականությանը, որոնց ապացույցները հարկ եղած դեպքում կարող ենք ներկայացնել հանձնաժողովի դիտարկմանը:

Ի հավելումն սյս ամենի հարկ ենք համարում նշել, որ «ա» և «բ» ենթակետերով նշված տողերի նյութերի արժեքը մրցույթով նախատեսված ընդհանուր շինաշխատանքների 0.1%-ը անգամ չի կազմում, և վերը շարադրված հանգամանքները ևս հաշվի առնելով համարում ենք, որ գնահատող հանձնաժողովի 04.02.2022թ.-ի թիվ 2-4 արձանագրությունը «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասով անհիմն է ընդունվել է օրենքի խախտմամբ և ենթակա է մերժման:»:

Ելնելով վերոգրյալից՝ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/12» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 04.02.2022թ.-ի թիվ 2-4 արձանագրության 1.2 կետով կայացրած որոշումը՝ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ:

«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն 03.03.2022թ.-ին ներկայացրած բողոի լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Ի լրումն 17.02.2022թ.-ի մեր բողոքի Ձեզ ենք ներկայացնում նույն պատվիրատուի կողմից կայացած մեկ այլ մրցույթի ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/9 ծածկագրով Սյունիքի մարզի «Գորիսի պրոֆեսոր Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքի կառուցման աշխատանքների գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի շտկման թիվ 2-2 արձանագրությունը, որտեղ արդեն գնահատող հանձնաժողովը ծանոթություն բաժնում հստակ նշում է, որ օդորակիչների և տարբեր տեսակի պոմպերի մոդելների հզորությունները ստուգվում են տվյալ սարքավորումների անձնագրային տվյալներում առկա համապատասխանաբար աերոդինամիկ և հիդրավլիկ կորերի միջոցով, ինչից պարզ է լինում նաև մեր այն պնդումը, որ նախօրոք հայտարարված մրցութային Փաստաթղթերում /ծավալաթերթ/ ընդհանրապես նշում չկա դրանց մասին: Հայտարարված մրցույթների ծավալաթերթերի բաժնում նշված է միայն տվյալ սարքավորումների օրինակի համար ծավ. 100խմ և 100ՄՊ հզորություն, և որևէ ձևով չի պահանջում դրանց միաժամանակյա ապահովում:»:

4. <u>ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 10.02.2022թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/2415-2022 և 18.02.2022թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/2916-2022 գրություններով դիմել է ՀՀ քաղաքաշինության կոմիտեին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի և «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից համապատասխանաբար 08.02.2022թ.-ին և 17.02.2022թ.-ին ներկայացված բողոքների վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին, ինչպես նաև ներկայացրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված փաստաթղթերը, միաժամանակ հայտնելով, որ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/12» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած 4 մասնակիցների հայտերը մերժվել են գնահատող հանձնաժողովի 2022 թվականի փետրվարի 4-ի թիվ 2.4 արձանագրությամբ և գնման ընթացակարգը հայտարարվել է չկայացած, իսկ գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ և կարգի պահանջներին համապատասխան:

5. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2022/19 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ՀՀ Լոռու մարզի Տաշիրի բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 07.12.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/12» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), իսկ հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 17.01.2022թ.-ին:

ii. Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ գնման գործընթացն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդված 6-րդ մասի համաձայն:

iii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել նաև «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ն, «Էնջինիրինգ» ՓԲԸ, «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն և «Երվադա» ՍՊԸ-ն:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 31.01.2022թ.-ի նիստի թիվ 2-2 արձանագրության համաձայն՝ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված չեն Հավելված 1.2-ը և ծավալաթերթ-նախահաշիվը, իսկ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1.2 մասով՝

ա) 1-ին տողով ներկայացված մոդելների համապատասխանությունը հրավերի պահանջներին ստուգել չի հաջողվել՝ համացանցում տեղեկատվության բացակայությամբ պայմանավորված,

բ) ներկայացված չեն մոդելներ հետևյալ տողերում՝ 18-103-րդ և 109-րդ

գ) 126-րդ տողով ներկայացված մոդելը իր մեջ պարունակում է արտադրող, որը չի համապատասխանում մասնակցի կողմից ներկայացված արտադրողին:

v. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները, որոշել է մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և մասնակիցներին առաջարկել ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում (01.02.2022թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Նույն արձանագրության 2.1 կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է հաջորդ նիստը հրավիրել 02.02.2022թ.-ին:

vii. Հանձնաժողովի 02.02.2022թ.-ի նիստի թիվ 2-3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է 31.01.2022թ.-ի թիվ 2-2 արձանագրության 2.1 կետում նշված «02.02.2022» թիվը փոխարինել «04.02.2022» թվով:

viii. Հանձնաժողովի 04.02.2022թ.-ի նիստի թիվ 2-4 արձանագրության համաձայն՝ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.2-ի մասով՝

ա) 28, 30, 35, 43, 55-57, 60, 70, 73, 82, 93-94, 98 տողերում ներկայացված մոդելները տեխնիկական բնութագրերով չեն համապատասխանում հրավերի պահանջներին,

բ) 101 և 103 տողերով ներկայացված մոդելները տեխնիկական բնութագրերով չեն համապատասխանում հրավերի պահանջներին (շատ հզոր է),

դ) 22-25, 40 և 69 տողերով ներկայացված են սխալ արտադրողներ,

ե) 126 տողով ներկայացված մոդելի համապատասխանությունը հրավերի պահանջներին ստուգել չի հաջողվել՝ համացանցում տեղեկատվության բացակայությամբ պայմանավորված (նման արտադրող չի գտնվել):

«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1.2 մասով չեն շտկվել՝

ա) 52-54, 68-69, 71, 78-79, 81, 95-103 տողերում ներկայացված մոդելը և արտադրողը իրար չեն համապատասխանում (ներկայացված արտադրողը նման մոդելային շարք չունի),

բ) 27, 31, 42, 45, 47, 63-64, 76, 88 տողերում ներկայացված մոդելները տեխնիկական բնութագրերով չեն համապատասխանում հրավերի պահանջներին:

ix. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է Կարգի 42-րդ կետով սահմանված պահանջի հիման վրա «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի և «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի հայտերը գնահատել անբավարար և մերժել:

6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը, լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից 08.02.2022թ.-ին ներկայացված բողոքն ու «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից 17.02.2022թ.-ին ներկայացված համանման բողոքն հիմնավոր են և ենթակա են բավարարման ամբողջությամբ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում

իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը,

բ. իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր համապատասխանության մասին,

գ. ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր),

թ. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձի դեպքում՝ հղում գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջին, իսկ այլ իրավաբանական անձանց դեպքում՝ գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60.3-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա սահմանված ձևով և կարգով: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում:

Նույն կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող՝ հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները, արտադրողները և երաշխիքային ժամկետները: Ընտրված մասնակցի հետ կնքվող պայմանագրի նախագծում ներառվում են վերջինիս կողմից հայտով ներկայացված սարքերը և սարքավորումները:

Նույն կետի 21-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում: Եթե գնման ընթացակարգի չափաբաժինների քանակը գերազանցում է յոթանասունհինգ չափաբաժինը, ապա հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ Լոռու մարզի Տաշիրի բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 07.12.2021թ.-ին հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/12» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 4.3-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող՝ սույն հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, մոդելները (առկայության պարագայում), արտադրողները և երաշխիքային ժամկետները:

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով

տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում, իսկ հայտերի մերժման դեպքում գնման ընթացակարգի արձանագրությունը պետք է հստակ պարունակի դրանց հիմնավորումը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ Լոռու մարզի Տաշիրի բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 07.12.2021թ.-ին հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/12» ծածկագրով բաց մրցույթ հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 17.01.2022թ.-ը: Հանձնաժողովի 31.01.2022թ.-ի նիստի թիվ 2-2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված չեն Հավելված 1.2-ը և ծավալաթերթ-նախահաշիվը, իսկ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1.2 մասով 1-ին տողով ներկայացված մոդելների համապատասխանությունը հրավերի պահանջներին ստուգել չի հաջողվել՝ համացանցում տեղեկատվության բացակայությամբ պայմանավորված, ներկայացված չեն մոդելներ հետևյալ տողերում՝ 18-103-րդ և 109-րդ, իսկ 126-րդ տողով ներկայացված մոդելը իր մեջ պարունակում է արտադրող, որը չի համապատասխանում մասնակցի կողմից ներկայացված արտադրողին, ինչով պայմանվորված որոշում է կայացվել մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և մասնակիցներին առաջարկել ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում (01.02.2022թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի 04.02.2022թ.-ի նիստի թիվ 2-4 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.2-ի մասով՝ 28, 30, 35, 43, 55-57, 60, 70, 73, 82, 93-94, 98 տողերում ներկայացված մոդելները տեխնիկական բնութագրերով չեն համապատասխանում հրավերի պահանջներին, 101 և 103 տողերով ներկայացված մոդելները տեխնիկական բնութագրերով չեն համապատասխանում հրավերի պահանջներին (շատ հզոր է), 22-25, 40 և 69 տողերով ներկայացված են սխալ արտադրողներ, իսկ 126 տողով ներկայացված մոդելի համապատասխանությունը հրավերի պահանջներին ստուգել չի հաջողվել՝ համացանցում տեղեկատվության բացակայությամբ պայմանավորված (նման արտադրող չի գտնվել): «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1.2 մասով 52-54, 68-69, 71, 78-79, 81, 95-103 տողերում ներկայացված մոդելը և արտադրողը իրար չեն համապատասխանում (ներկայացված արտադրողը նման մոդելային շարք չունի), բ) 27, 31, 42, 45, 47, 63-64, 76, 88 տողերում ներկայացված մոդելները տեխնիկական բնութագրերով չեն համապատասխանում հրավերի պահանջներին, ինչով

պայմանավորված որոշում է կայացվել «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի և «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի հայտերը գնահատել անբավարար և մերժել:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, համադրելով Ընկերությունների կողմից ներկայացված փաստական հանգամանքները Պատվիրատուի կողմից ներկայացված տվյալներին, ուսումնասիրելով ընթացակարգի հրավերը և հրավիրված նիստերով ներկայացած ներկայացուցիչների տված բանավոր հայտարարություններն ու բացատրությունները՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4-րդ կետի 4.3-րդ ենթակետի 4-րդ պարբերությամբ և Ընթացակարգի հրավերի Հավելված թիվ 1.2-ի՝ սարքերի և սարքավորումների նկարագրով մասնակցի կողմից հայտով մոդելի ներկայացման պարտադիր պահանջ սահմանված չէ, այլ նշվել է՝ «առկայության պարագայում», որպիսի պայմաններում հայտով մոդելների չներկայացնելը չի կարող ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Կարգի 41-րդ կետի համաձայն շտկման պահանջ ներկայացնելու հիմք հանդիսանալ, ըստ այդմ՝ շտկում պահանջելու արդյունքում շտկված մոդելների անձնագրային տեխնիկական բնութագրերում կրկին անհամապատասխանություն արձանագրելը նույնպես ոչ իրավաչափ է, քանի որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, տվյալ դեպքում, Ընկերությունների կողմից հայտով ներկայացված Հավելված թիվ 1.2-ի՝ սարքերի և սարքավորումների նկարագրի գնահատումը հրավերով սահմանված պահանջների նկատմամբ պետք է իրականացներ ներկայացված հայտերում առկա կամ բացակա մոդելների պայմաններում՝ ելնելով հրավերով սահմանված պահանջներից: Ուստի, տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի և «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի հայտերը մերժելու մասին որոշումներ կայացնելով, գործել է ոչ իրավաչափ:

Բացի այդ, Հանձնաժողովի՝ ընկերությունների հայտերը մերժելու մասին կայացված արձանագրությունը, Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի իմաստով, հստակ չի պարունակում դրանց հիմնավորումը, մասնավորապես՝ Հանձնաժողովը նշել է, որ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի և «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված մոդելները տեխնիկական բնութագրերով չեն համապատասխանում հրավերի պահանջներին, արտադրողը նման մոդելային շարք չունի, որոշ տողերով ներկայացված մոդելները շատ հզոր են, սակայն նույն արձանագրությամբ նշված չէ հիմնավորում այն մասին, թե նշված մոդելների տեխնիկական բնութագրերը հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերից ինչով են տարբերվում, կամ ներկայացված մոդելների ո՞ր չափորոշիչները չեն համապատասխանում հրավերի պահանջներին, հրավերի կոնկրետ ո՞ր պահանջին չի

համապատասխանում, առկա չէ կոնկրետ նկարագրություն կամ համեմատական որևէ փաստաթուղթ կատարված ուսումնասիրության մասին, որպիսի պայմաններում, Հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված դրույթի խախտում:

Միաժամանակ Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետով սահմանված պահանջների խախտում, քանի որ Ընթացակարգի հրավերի հայտերի ներկայացման և բացման վերջնաժամկետ է սահմանվել 17.01.2022թ.-ին, իսկ Հանձնաժողովի կողմից «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի և «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի հայտերն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը կայացվել է Հանձնաժողովի 04.02.2022թ.-ի նիստի թիվ 2-4 արձանագրությամբ՝ տասն աշխատանքային օրվա խախտմամբ, ինչի արդյունքում, այս մասով նույնպես, ընկերությունների հայտերն անբավարար գնահատելու և մերժելու մասին Հանձնաժողովի կողմից կայացված որոշումն իրավաչափ չէ:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետով սահմանված դրույթն իմպերատիվ (պարտադիր) կերպով սահմանում է, որ մասնակցի կողմից ներկայացված հայտի գնահատումը հանձնաժողովն իրականացնում է հայտի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում:

Ընդ որում՝ մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ տասն աշխատանքային օրվա ընթացքում գնահատում իրականացնելը ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականությունների կանխարգելմանը և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում այն ուղղված է իրավունքների և պարտականությունների սահմանմանն ու իրագործմանը, և վերջապես՝ հետապնդում է իրավական որոշակիություն ապահովելու նպատակ՝ որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ սահմանադրական դատարանն իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ 02.04.2014թ.-ին կայացրած թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ հայտնել է, որ իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի

պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը:

Սահմանադրական դատարանի մեկ այլ 18.04.2014թ.-ին կայացրած թիվ ՍԴՈ-1148 որոշմամբ, գտել է, որ իրավական պետությունում, իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում, օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի հիմքում պետք է դրվի այն հիմնարար մոտեցումը, որ օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքը հանդիսանում է իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերից մեկը: Փաստն այն է, որ վեճի առարկա իրավահարաբերությունների շրջանակում խախտվում է անձի օրինական ակնկալիքների իրավունքը:

Սահմանադրական դատարանը 18.04.2006թ.-ին կայացրած թիվ ՍԴՈ-630 որոշմամբ, մասնավորապես, արձանագրել է, որ օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ:

Վերը հիշատակված իրավական նորմերի նման մեկնաբանությունը բխում է նաև իրավական ակտերի որոշակիության սկզբունքից, որն իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հռչակված է ՀՀ Սահմանադրության թե մինչև 25.12.2015թ. գործող խմբագրությամբ, թե ներկայում գործող խմբագրությամբ 1-ին հոդվածով, իրավական պետություն է:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ Լոռու մարզի Տաշիրի բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 07.12.2021թ.-ին հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/12» ծածկագրով ընթացակարգի գնահատող

հանձնաժողովի կողմից ընկերությունների հայտերը անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումն ոչ իրավաչափ է, որպիսի պայմաններում «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքը և «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված համանման բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից 08.02.2022թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2022/19 ծածկագրով բողոքը և «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից 17.02.2022թ.-ին ներկայացված համանման բողոքը բավարարել:

Պարտավորեցնել «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/12» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 04.02.2022թ.-ի թիվ 2-4 արձանագրությամբ կայացված «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի և «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի հայտերը անբավարար գնահատելու և մերժելու ու գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին կայացված որոշումները:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**